

— Այսօր անկարելի է, վաղը առաւօտ ամեն բան պատրաստ կը լինի, եւ ճամփայ կ'ելնէք:

Գրիգորի հաճոյքը մեծ էր, օգտակար լինելու ուրախութիւնը կ'երեւեր երեսին վրայ: Իսկ ծեր գօրավարը, որ անխօս կը նշմարէր այդ երեւոյթը, մեծ ախորժով իմացաւ, եւ կամաց մը գլուխը կը շարժէր, որ իւր սովորութեանց մէջ «բարի նշան է» ըսել էր: Թենի իւր կարգին մէջ ոչինչ նշան հաւանութեան կամ ոչ հաւանութեան չէր յայտնէր:

— Զիմա այս նամակիս մէջ կան քանի մը մուր իւր անյայտ բաներ, որ Ատոմ գօրավարէն կ'իմաստ՝ կըսէ գիրը. ուրեմն այդ նեղութիւնը յանձն առնելով ինձ պիտի բացատրես, իշխան:

Ատոմ Թենիի ձեռքը թողուց. սա ոտք ելաւ եւ հարցուց ծերուն ժպտելով.

— Մենք երթա՞նք ուրեմն, հայրիկ:

— Զը՛,— ըսաւ ծերը աննշմարելի կնճիռով մը, որ ծիծաղ կը նշանակէր եւ միայն Թենիի պահած էր:

Գրիգոր այն ատեն ինքն էլ դուրս ելաւ եւ Թենի ըսաւ. — Գրիգոր իշխան, մի՞տքդ է այն ժամանակը, որ մեր գրքատունը շտկեցիր, կարգի գրիր:

— Այո՛, Օրիորդ, եւ այն ժամանակէն վերջը ինչպէս ամեն սիրելի բանէ զրկուեցայ, գրքի տեսութենէ նաեւ զրկուած մնացի:

— Ինձմէ զատ այդ խեղճ գրքերուն այցելութիւն ընող չի մնաց այն ատենէն ի վեր:

— Միատեղ այցելութիւն մ'ընե՞նք,— հարցուց Գրիգոր:

— Ես էլ այն կ'ուզէի, մանաւանդ որ դու վաղը պիտի թողուս զմեզ, եւ այնչափ ուրախութեամբ:

— Այդ ուրախութիւնը՝ մինչեւ այսօր անօգուտ կեանք մը Ռշտունեաց տան ծառայութեամբ օգտակար ընելու փափագն է: